

կողմն. եւ Գունդստապլն նշանին հանդերձ՝ առաջի թագաւորին. եւ Մարաջախտն առ դրանն՝ նշանիւ Գունդստապլին:

Եւ յորժամ կամենան սեղան բերել, նա տայ համայնք⁹¹ Սենեսկալն՝ Ջամբուլային, առնուլ ջրով եւ իւրով ձեռամբ լնուլ՝ ի ձեռս թագաւորին: Եւ յորժամ դնի սեղան՝ նա վստահանայ Սենեսկալն զԾաղիկն⁹² ի լիճ ճորտ մի պատշաճաւոր. նոյնպէս եւ Թագադիրն զմիւս թագն, եւ Գունդստապլն զնշանակ թագաւորին յԱսպասաւարն⁹³. եւ Մարաջախտն զնշանակ Գունդստապլին՝ յաւագ Չայուշն. եւ նստին ճաշակել. եւ Սենեսկալն եւ Պօղլերն սպասաւորեն՝ ըստ իւրեանց աստիճանին: Եւ յորժամ կատարի ճաշակմունսն, դարձեալ կանգնին աստիճանաւորքն՝ որպէս յառաջ գրեցաք՝ ըստ իւրաքանչիւր գործոյն, եւ կատարեն ուրախութիւն պատշաճաւոր մինչեւ ցինն ժամ:

Եւ յորժամ կամի թագաւորն փոխել զթագաւորական զգեստն՝ զայ Գունդստապլն եւ Թագադիրն եւ Սենեսկալն, մեծարեն զթագաւորն, եւ երթան առաջի նորա մինչեւ ի Ջամբուն. եւ Ջամբուլայն կենայ ի ջամբուն. եւ ուննայ զզգեստն. մտանեն եւ այս չորս աստիճանաւորքս, եւ փոխեն զզգեստ թագաւորին եւ զթագն. եւ դառնան առաջի թագաւորին մինչեւ յաթոռն. եւ նստի թագաւորն որչափ եւ կամի:

Յետ այսորիկ գան եպիսկոպոսքն եւ կղերիկոսքն, եւ կատարեն զժամ երեկոյին յարքունի եկեղեցին: Եւ բերեն սեղան, եւ կատարեն որպէս վերոյ գրած է. եւ մտանէ թագաւորն եւ խաղաղանայ յամբոյսէն: Եւ շնորհէ զերիվարն (իւր) թամբօք եւ սանձիւք՝ թէ ոսկի եւ թէ արծաթի՝ Գունդստապլին. եւ տանողն լինի Մարաջախտն. եւ Գունդստապլն զիւր երիվարն շնորհէ Մարաջախտուն. Մարաջախտն զիւր երիվարն՝ Աւագ չաւուշին: Եւ թագաւորն շնորհէ հալաւ եւ գօտի ոսկի՝ Թագադրին. եւ Սենեսկալուն՝ զսենին⁹⁴ յոր եւ ճաշակէ թագաւորն, թէ ոսկի եւ թէ արծաթի, եւ զդգալն. եւ Ջամբուլային՝ զդաշտիշոնն եւ զդասպրիկն⁹⁵, թէ ոսկի է եւ թէ արծաթի. եւ Պօղլերին՝ զուրն եւ զքսեստին, թէ ոսկի եւ թէ արծաթի. եւ այլ լիճ ճորտերոյն եւ գործաւորացն՝ տայ շնորհս ըստ կամաց իւրոց:

⁹¹ Հրաման:

⁹² Շուշանաձայր գաւազանն արքունի:

⁹³ Միւս եւս պաշտօնեայ, որ է Հեծելապետն, ըստ օրինի բանակին Պարսից, որպէս եւ յետագայն (Չայուշ)՝ ըստ Թուրքաց:

⁹⁴ Մինի, թուրք բառ եւ այս, որ է Սկուտեղն կամ Խան:

⁹⁵ Տաշտն կամ լուացարանն եւ կուժն. *լէհէն, երպրոզ* Թուրքաց: